ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ

№ 161/45-L «25» 08 2026թ.

ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄԲԻՈՆՆԵՐԻ ՎԱՐԻՉՆԵՐԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգի» (այսուհետ՝ Ընթացակարգ) 6-րդ կետի պահանջները և ղեկավարվելով ԵՊՀ կանոնադրության 57-րդ կետի 10-րդ ենթակետով՝

հրամայում եմ՝

1. ԵՊՀ ներքոհիշյալ ամբիոնների վարիչների թափուր պաշտոնները համալրելու նպատակով 2026թ. հոկտեմբերի 5-9-ը ընկած ժամանակահատվածում՝ Ընթացակարգի համաձայն, նշանակել և անցկացնել մրցութային ընտրություն.

ՀՀ	ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ	ԱՄԲԻՈՆ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓ
1.	Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ	Դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոն	1
2.	Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետ	Թվային անալիզի և մաթեմատիկական մոդելավորման ամբիոն	1
3.	Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետ	Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոն	1
4.	Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետ	Ֆրանսիական բանասիրության ամբիոն	1

2. ԵՊՀ անձնակազմի կառավարման բաժնին՝ ԵՊՀ ամբիոնների վարիչների ընտրության նշանակման ու անցկացման վերաբերյալ հայտարարությունը հրապարակել ԵՊՀ ինտերնետային կայքէջում և սահմանված կարգով կազմակերպել ամբիոնի վարիչի թեկնածուների առաջադրման վերաբերյալ փաստաթղթերի ընդունման գործընթացը:

3. Սույն հրամանի մասին սահմանված կարգով տեղեկացնել ԵՊՀ պրոռեկտորներին, անձնակազմի կառավարման բաժնին և կրթական ստորաբաժանումների ղեկավարներին:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ՝ Հ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ